№ 43 Մարտի 15 (27) 1880 Մարտի 15 (27) № 43

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի աղետալի լուր։—Ներքին տեսութիւն, Մի նկատողութիւն։ Նամակ Զիգիշլարից։ Նամակ Շամախուց։ Նամակ Երևանից։ Նամակ Բագուից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Times» լրագրի յօդուածը, Թիւրքիա։ Անգլիական պարլամենտը և Ֆէրրիի օրէնքը։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՄԻ ԱՂԵՏԱԼԻ ԼՈՒՐ

Մեզ հաղորդեցին Վանի ռուսաց կոնսուլի, պ. Կամսարականի հետևեալ տխրալի հեռագիրը տըպագրելու համար, որ և շնորհակալութեամբ տպում ենք։ Պ. Կամսարականը ստանալով փողերը, որոնք ուղարկվեցան յօգուտ Վանի սովատանջների, պատասխանում է որ փողերը ստացել է և աւելացնում է.

«Սովը անասելի սաստկութեամբ աճում է. Աղբակում մօտ 150 մեռածներ կան, գիւղական հարիւրաւոր աղջիկներ մերկ և սոված ընկած են գիւղերի փողոցների վրա։ Վանում երկու մինչև երեք հարիւր մանուկներ անօթութենից հիւանդացել են։ Խրիմեան ձեռնարկում է մի հիւանդանոց հիմներ։ Օգնեցէք այդ մարդասէր հիմնարկութեանը։ Եթէ հարկաւոր միջոցներ չը գործ դրվեն, Վասպուրականը կորած կը լինի։ Միայն նշանաւոր գումարներ կարող կը լինէին փրկել կատարեալ կորուստից։»

Մի՞թէ այդ տեսակ պաշտօնական անձի ձեռքով գրած դօկումենտն էլ տեսնելով Թիւրքաց կառավարութիւնը կը հերքի Հայաստանի մէջ սովի աղետալի եղելութիւնը։

Այժմ մենք հասկանում ենք թէ ինչի Ռ. Դուռը մի կողմից հրամայում է Կ. Պոլսի հայոց լրագիրներին լռել Հայաստանի անմխիթար դրութեան վրա, իսկ ուրիշ կողմից արգելում է Ռուսաստանի մէջ հրատարակվող հայոց լրագիրներին մտնել իր պետութեան սահմանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԻԱՆՁՆՈՒՀԻՆԵՐԻՆ

Բարեհաճեցէք տեղ տալ ձեր լրագրում այս մի քանի տողերիս։ Երբ յօգուտ Վանի սովատանջների համարեա բոլոր հասարակութեան դասակարգերից փողեր են հաւաքվում, երկու դասակարգ միայն մնում են մինչև այսօր խուլ դէպի նրանց աղէտալի և մերձ ի մահ դրութիւնը։ Մեր խօսքն է մեծ մասամբ վարդապետների և Թիֆլիսի կոյսերի մասին։ Տարօրինակ երևոյթ է ճշմարիտ՝ կարծես այն մարդիքը, որոնք հեռացել են աշխարհից և նուիրել իրանց անձը հոգւոյ փրկութեանը, առաւել ևս զգայուն սիրտ պէտք է ունենային, առաւել ևս պէտք է շուտ օգնութեան ձայն տային քաղցածներին, քան թէ մենք, մեղաւոր աշխարհականներս։ Բայց ի՞նչ ենք տեսնում, բոլորովին ընդհակառակն... Երբ աշխարհականը, ինչպէս պ. Մարտիրոս Հախնազարեանցը (Մշակ № 22), կարդալով «Հայրիկ հոց, հայրիկ հոց» խօսքերը, դառն արտասունքներ է թափում և մի քանի իր նըման չքաւորների հետ օգնութեան ձեռք է մեկնում վանեցիներին, վարդապետները և կոյսերը քարացրել են իրանց սիրտը, նրանց աչքերում արտասունքներ չեն երևում։ Վարդապետների մասին մենք այլ ևս չենք կամենում խօսել, նրանք սովորել են միայն փող հաւաքել ուրիշներից։ Իսկ դուք, Թիֆլիսի կոյսերդ, ո՞ւմ համար էք պահում ձեր փողերը։ Ձեզանից ամեն մինը ունի յայտնի գումար, մեզ այս հաստատ յայտնի է։ Մի՞թէ ձեզ չէ վրդովում վանեցիների քաղցածութիւնը։ Եթէ դուք լրագիր չէք կարդում, ներեցէք, չը գիտենք, մի՞թէ զոնեա չէք լսում, որ սովը Վանում մինչև այնտեղ է հասել, որ արմատներով են կերակրվում, որ սովից մեռած դիակներ են պատահում։ Պատմութիւնից օրինակներ կան, որ սովը երբ սաստկանում է, մարդկային զգացմունքները բթանում են, մարդ գազանանում է, նա չէ խնայում իր ամենամերձաւորը՝ կինը և որդին, սպանում է նրանց և ուտում է քաղցից դրդված։ Մի՞թէ մինչև այս դրութեանը պէտք է թողնենք հասնել մեր եղբայրներին և քոյրերին։ Մի՞թէ կարծում էք դուք, որ ձեր պարտաւորութիւնը վերջանում է նրանով, որ առաւօտ և երեկոյեան եկեղեցում աղօթում էք, զիշերները եկեսցէ կարդում, և երբ հրաւիրում են, ննջեցեալների վրա երգում էք։ Չէ, դուք ունէք այժմ առաւել ևս մեծ պարտաւորութիւն՝ մեկնել ձեր ձեռքը Վանի քաղցածներին։ Սրանով չը բաւականանալով միայն, դուք պարտաւոր էք՝ ամեն մինդ ձեզանից, տունից տուն Թիֆլիսում մանգալով նուիրատուութիւններ հաւաքել ամենքից սովատանջների համար։ Մենք հաւատացած ենք, որ այնպիսի քարացած սրտերն անգամ, ինչպէս Թիֆլիսի մի քանի հարուստներինը, ձեր ներկայութեամբ և առաջարկութեամբ կը մեղմանան և զգայուն մարդի սրտեր կը դառնան։ Մի՞թէ սրանից առաւել սուրբ պարտաւորութիւն կը լինի ձեզ համար, որ դուք կը դարձնէք շատերը, որոնց մէջ չը կայ ազգայնութեան նշոյլ անգամ, որոնք կորցրել են մարդկային զգացմունքների յատկութիւնը, դէպի մի բարի գործ՝ դէպի մահից կենդանութիւն տալ քաղցածին։

Մենք յուսով ենք բոլորովին, որ կը լսենք շուտով այսպիսի մի վսանգաւոր և թշուառ դէպքում ձեր մանակցութիւնը և ձեր ջանքը սովածների համար փողեր հաւաքելում։

Բժիշկ Միրիմանեան

ՆԱՄԱԿ ԶԻԳԻՇԼԱՐԻՑ

Փետրվարի 23-ին

Հայաստանի Վան քաղաքի և նրա շրջակաների մէջ յայտնված սովը ամեն մի ազնիւ հայի սրտում ցաւ է ներդործում։ Ուստի մենք էլ, հայերի փոքրիկ խումբը Զիգիշլարում, պ. Սարգիս Լալայեանցի և Նիկոլայ Մէլիքեանցի ջանացողութեամբ ստորագրութիւն բացարինք և հաւաքեցինք յօգուտ Վանի սովատանջների 255 ռուբլի, որ և ուղարկում ենք ձեզ նուիրատուների ցուցակի հետ միասին։ Այսպէս ոմն 100 ռուբլի, եղբայրք Տէր-Օհանեանց 25 ր., Ն. Մելիքեանց 10 ր., Մ. Բաբայեանց 5 ր., Թ. Հախումեանց 10 ր., Ե. Կուզնեցով 10 ր., Ա. Մնացականեանց 5 ր., Մ. Գէորգեանց 5 ր., Ա. Բաղիրով 5 ր., Ա. Մելիքեանց 5 ր., Անյայտ ոմն 25 ր., Յայտնի ոմն 10 ր., Անյայտ ոմն 10 ր., Ա. Մելիքեանց 5 ր., Զապարով 5 ր., Զ. Փաւուխով 10 ր., Ա. Շանպաղեանց 5 ր., Վ. Մեսրովբեանց 5 ր.։ Գումարն է 255 ր.։

Աւէտիս Տէր-Օհանեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

4 մարտի

Ցեսնելով մեր ազգային եղբարց որպէս ռուսահպատակ, Նոյնպէս և Վանայ, Աշկերտի և Բայազէթի աղետալի կաթուածը հացի, փութացայ յօգուտ նոցա առաքել ձեզ իմ լուսայն յիսուն ռուբլի արծ. խոնարհաբար խնդրելով ձեզնից, համեմատ ձեր նկատողութեան հասուցանել ուր արժան կը համարէք, 30 ռուբլին վան Ռուսահպատակ մեր ազգայնոց, և 20 ռուբլին Վանայ, Աշկերտի և Բայազետու ազգայնոց։

Ընդունեցէք իմ խորին յարգանաց հաւաստիքը։

Պ. Մելիք-Բեգլարեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

20 փետրվարի

Շատ անգամ հասարակական օգտաւէտ հիմնարկութիւնները չեղվում են իրանց բուն նպատակից և մասամբ դառնում են բարոյական ախտերի կենտրոն։ Յաւալի իրողութիւն, բայց ափսոս, որ ասածներս ճշմարիտ է։ Այդպիսի հիմնարկութիւններից մէկը և կլուբն է։ Ի՞նչ է արդեօք կլուբ ասածը, եթէ ոչ մի հիմնարկութիւն, որի նպատակն է հանել մարդուն իր ընտանեկան նեղ շրջանից և մտցնել հասարակական, ընկերական կեանքի մէջ, ստիպել նորան զանազան խօսակցութիւններով, միմեանց մէջ ունեցած խորհրդակցութիւններով, դատողութիւններով, հարցեր լուծելով զարգացնել իր միտքը, ճաշակը, կենցաղավարութիւնը, բարքը, վարքը և այլն։ Ի հարկէ այդ բաւական չէ։ Որական պաշտօնական ծառայութիւնները, արհեստաւորի, վաճառականի, ուսուցչի և ուրիշ շատերի ծանր աշխատութիւնները չափ ու սահման ունեն։ Բնական է, որ մարդ այս բոլորից յետոյ բաւականութեան մէջ լինել է ուզում. ուրախ, զուարճալի ժամեր անցնել է սիրում և իր այդ զուարճութիւնը, ուրախութիւնը նա գտնում է կլուբի մէջ պարելով, խօսելով, ծիծաղելով, դիցուք չափաւոր ուտելով ու խմելով։ Ահա մեր կարծիքով ինչ է կլուբի նշանակութիւնը, ահա ինչ է նորա նպատակը։ Այդ նպատակին էլ արդեօք հետևում մեր Երևանի կլուբը։—Ո՛չ, ու ամենևին ոչ։ Եթէ մանէք մեր կլուբը, միայն կը տեսնէք թուղթ խաղացողների խմբեր, որոնք նստում են շատ ու շատ երկար ժամեր. դրանց երեսին նշմարվում է կամ ուրախութեան և կամ յուսահատութեան նշաններ։ Կլուբի նոր գրված անդամը, որ բոլորովին անծանօթ էր առաջ կամ անընդունակ թղթախաղին, ընկնում է պատահմամբ այդպիսիների թակարդը և դատարկում է նրանց առաջ իր քսակը։ Ասիական կեանքում մեծացած հայ կինը՝ այդ հայ-վաճառականի թանգագին ամուսինը, անդամ գրվելով կլուբում և ծանօթանալով եւրոպական վերջին նորաձևութեան, մոդայի հետ, ամբողջապէս՝ հոգւով ու մարմնով անձնատուր է լինում այն մտքին, թէ երբ պէտք է գնալ կլուբ, ինչ հագուստով, ինչ ճաշակով և այլն։ Նորա տնտեսութիւնը մոռացվում է։ Նա, որ առաջ իր տնտեսական գիտութիւններով, ընտանեկան նիստ ու կացով օրինակ էր լինում, այժմ այդ իր միակ արժանաւորութիւնից էլ զրկված, բամբասանքի և պախարակութեան առարկայ է դառնում։ Հայ կնոջը վերցնել ու փակ կեանքից յանկարծակի աղատութիւն տալ—առարկայ է դառնում։ Հայ կնոջը վերցնել ու փակ կեանքից յանկարծակի աղատութիւն տալ—կը նշանակի միանգամայն ապականել և հրէշացնել նորան....

Այս է Երևանի կլուբը յաճախող հայ տիկինների պատկերը. երևանցի հայ կնոջ յառաջադիմութիւնը։

Կլուբի այժմեան կազմակերպութիւնը և վերջին օրերում տեղի ունեցած անբաւականութիւնները նորա անդամների մէջ առիթ է տալիս ինձ մի առաջարկութիւն անել մեր վաճառականներին, որոնց թիւը կլուբում այս տարի եռապատկուելով, հասել է մինչև 40—50-ի։

Մենք հեռու չենք այն մտքից, որ այդպիսի հիմնարկութիւնների մէջ, ինչպէս կլուբն է, միաքաղաքայի հայերը, թուրքերը, ռուսները միասին նստէին, միասին մտածէին, միասին գործէին։ Այդ կը լինէր և ցանկալի է այն ժամանակ, եթէ ամենքի համոզմունքները, խնդիրները, ճաշակը մի լինէին։

Բայց որովհետև գաղափարների, զարգացման աստիճանների տարբերութիւնից յառաջանում են անբաւականութիւններ և կլուբը այդ դէպքում ստանում է Կրիլովի «Квартетъ»-ի պատկերը,—աւելի լաւ կը լինէր, եթէ մեր քաղաքացի վաճառականները մտածէին բաց անել իրանց համար մի առանձին կլուբ, որ կարող էր ստանալ օրինակ «Վաճառականական կլուբ» անուն։ Բացի դրանից այդպիսի հիմնարկութիւն բաց անելուց առաջ, մենք խորհուրդ կը տայինք նոր բացանելի կլուբի կանոնադրութեան վրա մտածել և մտցնել նրա մէջ այնպիսի յօդուածներ, որոնք կը բովանդակեն իրանց մէջ պարզասրութեան, մոդայի բացակայութեան մտքեր։ Թող հաւատան, որ այդպիսի դէպքում, կլուբը չէր ստանայ մի որ և է վատ չկոչայի կերպարանք, այլ ընդհակառակը աւելի շուտ կը հասցներ նրան իր նպատակին։

Յովհաննէս—Հեթում

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՑ

29 փետրվարի

Ահա ուղարկում ենք ձեզ եօթանասունը վեց ռուբլի որ հաւաքեցինք Վանայ սովելոց օգնին, մեր պատուելի ազգայինների օժանդակութեամբ, որոց յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

Պարոն խմբագիր, խնդրում բարեհաճեցէք յիշեալ գումարը հասցնել պատկանելոյն և ձեր պատուա-

կան թերթի մէջ տպագրել նուիրատուների անունները։

Մարգարէ Ճգնաւորեանց (չուչեցի) 20 ռուբլ, Առաքել Քեօչարեանց 10 ր., Դաստպար Բալայեանց 5 ր., Ն. Բ. Բ. 5 ր., Ա. Թարխանեանց 5 ր., Ա. Ղազիան Դիլդարեանց 5 ր., Ցարութիւն Շահնազարեանց 3 ր., Յովհաննէս Շահնազարեանց 3 ր., Մինաս Կանկաճեանց 2 ր., անյայտ ումն 2 ր., Ազաջան Արուտչեանց 2 ր., Անյայտ անձն 2 ր., Խաչատուր Սերկէյեանց 1 ր., Ցակոբ Շահնազարեանց 1 ր., Անդրէաս Շահրազեանց 1 ր., Արտեմ Սաղիեանց 1 ր., Ալէքսանդր Ղուլիեանց 1 ր., Տէր-Զաքարեանց 1 ր., Գրիգոր Բեջանեանց 1 ր., Թավատ Ղազիեանց 1 ր., Խաչատուր Ղարախանեանց 1 ր., Ղազար Մաթևոսեանց 1 ր., Կարապետ Մարգարեանց 1 ր., Ալէքսանդր Ղարազով 1 ր.։ Ընդամենը 76 ռուբլ։

Առաքել Քեօչարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, մարտի 8

Մենք աչակերտներս բէյական դպրոցի և պրոգիմնազիայի գցում ենք մեր ջնջին լուսն վանի սովելոց համար, յուսալով, որ մեր միս դպրոցների ուսանողներն ևս կը հետևեն մեր օրինակին։ Բայց ցաւոք սրտի չեմ կարող չը յիշել այն, որ իմ հաւաքած արծաթը գոյացել է ըստ մեծի մասին աղքատ աչակերտներից, որի ընդհակառակն, մեր Թիֆլիսեցի հարուստ ընկերները, ոչ միայն անտարբեր գտնվեցան, այլ արհամարհանքով էին պատասխանում ինձ, երբ ես դիմում էի նրանց, խնդրելով, որ մի բան ստորագրեն։ Կարծես, ազգային զգացմունքը բոլորովին մեռած լինի դրանց սրտերում։ Վա՛յ այն հայերին, որոնք այսպիսի որդիներ են պատրաստում....

Ահա նուիրատուների ցուցակը. Մելիք-Հախնազարեանց Եփկողայոս 5 ր., Ցարութիւն Բարսեղեանց 1 ր., Սիմէոն Պապկնեանց 50 կ., Ուսանող ումն 50 կ., Միրզոյեանց 1 ր., Եարամիչեանց 1 ր., Ումն 50 կ., Գ-սկայ 50 կ., Հայ ումն 50 կ., Ուսանող ումն 50 կ., Π. Монастырский 30 կ., Θ. Курлика 50 կ., Վարդանեանց 1 ր., Յովսէփ Ալխանեանց 1 ր., Քամոեանց 50 կ., Լևոն Իզբաչեանց 1 ր., Սարաջեանց Յովհաննէս 50 կ., Համազասպ Օրբելի 50 կ., Միրիմանեանց 30 կ., Սունդուկեանց 60 կ., Ա. Շահմուրադեանց 40 կ., Միրզոյեանց 50 կ., Зубаловъ 2 ր., Голунскій (Ղրէայ) 40 կ., Լևոն Արասխանեանց 1 ր., Բէհբութեանց 1 ր., Բաստամեանց 50 կ., Անանեանց Աբգար 1 ր., Պիրաղեանց 50 կ., Павловскій 1 ր., Чаплинъ 1 ր., Ցանզերեր 1 ր., Ազաջան Նաւասարթեանց 1 ր., Տէր-Դաւթեանց 2 ր., Մալիեանց 1 ր., Նաղարբէգեանց Ա. 2 ր., Խուդադեանց 1 ր., Պանցերեր 1 ր., Միրիմանեանց 1 ր., Ադամջանեանց 1 ր., Ցուրինեանց Կ. 40 կ., Տէր-Պետրոսեանց 50 կ., Գ. Ցուրինեանց 40 կ., Н. Церетели 1 ր., Տէր-Ղուկասեանց Գէորգ 1 ր., Пораковъ Іосифъ 1 ր., Արշակ Թէյմուրազեանց 1 ր., Լազարեանց 1 ր., Хосроевъ 1 ր., Յովհաննէս Սադաթէլեանց 50 կ., Ն. Սարգսեանց 1 ր., Ն. Մատինեանց 1 ր., Աղէքսանդր Յակոբեանց 1 ր., Արշակ Ադամեանց 1 ր., Մ. Թառումեանց 1 ր., Ա. Ճշմարիտեանց 1 ր., Փաթայեանց 50 կ., Кетхудовъ 1 ր., Բոստոնեանց եղբայրներ 1 ր., Տէր-Միքայէլեանց Հայկ 2 ր., Абазадзе Александръ 50 կ., Մի օրիորդ 1 ր., Շամիր Սողոմոնեանց 1 ր., Մովսէս Խախանեանց 50 կ., Ցարութիւն Պետրոսեանց 20 կ., Արտեմ Եղիազարեանց 1 ր.։ Գումարն է 60 ռուբլ։

Ն. Մելիք-Հախնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մարտի 13-ին, հինգշաբթի օրը, դարձեալ ուղարկեցինք 1000 ռուբլ յօգուտ վանի և Ալաշկերտի սովատանջների։ Վերջին անգամ (մարտի 11-ին) փող ուղարկելուց յետոյ, մնում էր խմբագրութեան մէջ 704 ր., 92 կոպ.։ Դորանից յետոյ հաւաքվեցաւ դարձեալ 537 ր., 75 կ., որ միասին կանէ 1242 ր., 67 կոպ.։ Այդ փողից ուղարկեցինք Կ. Պոլսի կենտրոնական մանաժողովին, Կիլիկիայի առևտրական տան ձեռքով 1000 ր., և բացի սորանից վճարեցինք 3 ր. 25 կ., հեռագրի ծախս, ուրեմն մնում է խմբագրութեան մէջ 239 ր., 42 կոպ.։ Ուրեմն մինչև այժմ, մօտ մի ամսվայ ընթացքում ուղարկած ենք յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների ընդամենը 14,000 ռուբլ։

—

Ներողութիւն ենք խնդրում մեր թղթակիցներից որ այժմ մի կողմից նուիրատուների ցուցակների չատութեան պատճառով, իսկ ուրիշ կողմից մեր աշխատակից Բաֆֆիի «խնդիրը» վիպասանութիւնը «Մշակի» մէջ տպելու պատճառով, մեր մշտական թղթակցութիւնների տպագրելը քիչ ուշանում է։ Այդ է պատճառը որ մենք համարձակվում ենք խնդրել մեր թղթակիցներից, առժամանակ դադարել աշխատել հաղորդել «Մշակին» կամ չատ կարճ թղթակցութիւններ, կամ միայն լուրեր։

—

Մարտի 20-ին «կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան» անդամները հրաւիրվում են ընդհանուր, ժողովի 7½ ժամին երեկոյեան, Գիւղատնտեսական ընկերութեան բնակարանը, Բարիատինսկի փողոցի վրա, Ալէքսանդրեան այգու մօտ։ Կենդանիների հովանաւորութեան գործով հետաքրքրվող անձինք էլ կարող են ներկայ գտնվել ժողովին։ Անդամներին խնդրում են վճարել իրանց անդամական վճարները ընկերութեան գանձապահ պ. Կասումովին, որ ընդունում է իր բնակարանում (Թումանովի տանը, Երկրորդ փոստային փողոց, այգու դիմաց) ամեն օր, 9—12 ժամ։

—

Թիֆլիսի քաղաքային Դուման, իր մարտի 10-ի նիստի մէջ ընտրեց Միքայէլեան քաղաքային արուեստագործական դպրոցի ուսումնարանական յանձնաժողով, որ բաղկացած է թէ ռուսներից թէ հայերից և թէ վրացիներից։ Այդ տեսակ ընտրութիւնը մենք չատ յարմար ենք համարում, որովհետև Միքայէլեան դպրոցում դասատուութիւնը կաւանդվի երեք լեզուով՝ ռուսերէն, հայերէն և վրացերէն։

—

Կիրակի օրվայ, յօգուտ վանի սովատանջների տրվող պ. Կոզլովի ներկայացման համար տոմսակները կարելի է ստանալ թէ Արծրունու թատրոնի կասսայում և թէ «Մշակի» խմբագրութեան մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«TIMES» ԼՐԱԳՐԻ ՄԻ ՑՈԴՈՒԱԾ

—

Փետրվար 20 թուով Թայմսի մէջ հետևեալ յօդուածը կը կարդամք «Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» խորագրով։

«Ազգային Բլիւպի նախագահ Մաքսիմալտ գնդապետին և մանախորհրդին հրաւիրանք, երեկ Բլիւպի սրահին մէջ (ի Հուայթհօլ—Կարտրնս) Միթինկ մը տեղի ունեցաւ, ուր Այնթապի Հայ արքեպիսկոպոս Մկրտիչ՝ Փոքր-Ասիոյ մէջ Հայաստանեաց եկեղեցւոյ բարեկարգութեան պատմութիւնն բրաւ։ Լօնտրայի եպիսկոպոսը, Վերապատուելի Բայէն եպիսկոպոսը, Պակոթ երէցը, Թրիսթրէմ Կանոնիկոսը, Պատուելի Նօլան, Պատուելի Սիմիսին և Պ. Բաստմ ներկայ գտնուող ներուն մէջ էին։ Մաքսիմալտ գնդապետը կը նախագահէր։ Թրիսթրէմ Կանոնիկոսը բանախօսութիւն մ՝ընելով ըսաւ թէ Հայաստանեայց եկեղեցին մասնաւոր պահանջումներ ունէր մեր (Անգլիացւոց) վրա, և սակայն հարկաւ կրնամք ցուցնել ուրիշ ազգային եկեղեցի մը, որոյ վրա մեք Անգլիոյ մէջ ընդհանրապէս ոչինչ գիտնամք։ Թրիսթրէմ Կանոնիկոսն Հայաստանեայց եկեղեցւոյ մէկ համառօտ պատմութիւնն, և յիշեալ եկեղեցւոյ անդամից կողմանէ դարէ ի դար ընդունուած նախապաշարման հաւատալեաց նկարագիրն ընելէ յետոյ, ըսաւ թէ Ամերիկայի Պօրտ ընկերութեան Միսիոնարաց գործը Փոքր-Ասիոյ Հայոց մէջ քննութեան ոգի մը զարթուցանելով կարևոր արդիւնքներ յառաջ բերած էր։ Այնթապի արքեպիսկոպոս և Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնական գլխաւոր կեդրոններէն մին եղող Սսոյ վանքին կաթողիկոս Ներսէս Մկրտիչ՝ այս կերպիւ երևան եկած կրօնական վերնարանութեանց միջոցին իւր ժողովրդեան կողմէ իրեն եղած այլ և այլ հարցմանց վրա համոզուեցաւ թէ խոշոր սխալներ և զեղծումներ սպրդած էին Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ։ Սակայն իւր ժողովրդէն բաղմաց պէս, Մկրտիչ արքեպիսկոպոս Ամերիկայի Նոնքոնֆորմիստ եկեղեցեաց Միսիոնարներուն աւանդած Քոնկրեկեշընէլ (ժողովական) դրութիւնը կ՝ատէր։ Երբ կէտին վրա տակաւին կը վարանէր, անգլիական աղօթագրքին մէկ թարգմանութիւնը ձեռք ձգեց, և անգլիական եկեղեցւոյ ժամագրքին և եպիսկոպոսական դրութեան մէջ գտաւ այն բանն ում սրտանց կրնար յարիլ*։ Բարեկարգեալ հաւատոյ մասին իւր ըրած քննութեանց մէջ իրեն օգնեցին Կ. Պոլիս բնակեալ Պատուելի Քէօլէր Միսիոնարն և Հանգուցեալ Կոպոթ եպիսկոպոսն, և ի վերջոյ Մը-կրտիչ արքեպիսկոպոս հրապարակաւ յայտարարեց թէ ինք Անգլիոյ եկեղեցւոյն կը յարէր։ Այս պատճառաւ ինք հալածանքներ և վնասներ կրեց, բայց իւր գիրքը պահեց և Այնթապի մէջ 300 է աւելի Հայք հաւատարիմ մնացին իւր հոգևոր իշխանութեան։ Եթէ Պատուելի Նիւթրն չը մեռնէր, այժմ Մկրտիչ արքեպիսկոպոս կրնար եկեղեցի մ՝ունենալ և անոր մէջ իւր ժողովրդեան քարոզել։

«Տարիներով յապաղումէ յետոյ, Այնթապի մէջ եկեղեցւոյ մը շինութեան համար հայսերական հրովարտակ մը ձեռք բերուեցաւ, Հիմերը դրուեցան և պատերն ալ պատնէն քանի մ՝ոտք կրցան բարձրանալ, բայց դրամի պակասութեան պատճառաւ գործը կասեցաւ, և յիշեալ եկեղեցւոյն մի քանի դպրոցներու կառուցման համար հանգանակութեան մը հրաւէր կը կարդացուի։ Սրբ Հէների Լէյարտ կաշխատի Բ. Դրնէն հրովարտակ մը ձեռք բերել, որ Փոքր—Ասիոյ մէջ անկլիքան եկեղեցւոյ գոյութիւնը ճանչէ։ Ն. Վսմութիւնն յոյժ ջերմութեամբ գրած է առ Լորտ Թէնթէրտն՝ ի Նպաստ Մկրտիչ Արքեպիսկոպոսին։ Հայոց ժողովական (բողոքական) 43 միութեանց պատուելիներն և երեք եպիսկոպոսները գիր ուղղած են յայտարարող թէ իրենք պատրաստ են Բարեկարգեալ (Անկլիքան) Հայ եկեղեցւոյն յարիլ, եթէ զայն իրրև զատ եկեղեցի ճանչցնող հրովարտակն ստացուի։ Այնթապի այդ եկեղեցւոյն համեստ շէնքը կառուցանելու համար 1000-էն 1200 անգլիական ոսկի պէտք կը լինի, որոյ 300-ն արդէն հանգանակեալ է։ Տարակոյս չը կայ թէ կարևոր արդիւնքներ յառաջ պիտի գան Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած սոյն շարժումէն։

«Ցեսոյ Մկրտիչ արքեպիսկոպոսն, որ կը սուէր թէ միայն անցեալ սեպտեմբոյ մէջ սկսած էր անգլիերէն ուսնիլ, և որ տակաւին խիստ քիչ ժամանակէ՝ ի վեր այս երկրին (Անգլիոյ) մէջ կը գտնուէր, խօսք առնելով, անգլիերէն լեզուաւ և ներկայ պարագայից մէջ ուշադրութեան արժանի ուղղութեամբ Թրիսթրէմ կանոնիկոսէն աւելի մանրամասն նկարագրեց Հայ եկեղեցւոյն մէջ բարեկարգութեան համար եղած շարժումը։ Պ. Բաստմ յաջորդելով, ժողովրդեան հետ իւր անձնական ծանօթութեանը վրա յենլով ըսաւ թէ անոնցմէ շատեր պատրաստ են Բարեկարգեալ եկեղեցւոյն յարիլ, եթէ Անկլիքան եկեղեցին անգամ մը ճանչուի իրրև զատ եկեղեցի՝ ի Փոքր—Ասիա։ Տրոց վճարման խնդիր մը կայ. բայց թուրք պաշտօնատարը, որը տուրքերն եկեղեցեաց գլուխներուն միջոցաւ կը հաւաքեն, իրենց կրօնական վէճ մը նկատած բանին չը պիտի միջամտեն։ Ամերիկացի Միսիոնարաց Ժողովրդական եկեղեցիներն արդէն ճանչուած էին, և այժմ հարկ էր որ Անկլիքան եկեղեցին և Մկրտիչ արքեպիսկոպոսին դիրքը պաշտօնապէս ճանչուէին։ Պատուելի Թրիսթրէմ Կանոնիկոսը Քէնթբրիի արքեպիսկոպոսին այժմ Անգլիոյ եկեղեցւոյն հետ հաղորդակցութեան մէջ գտնուող Մկրտիչ արքեպիսկոպոսին վրայ գրած յանձնարարագիրը կարդաց, որ սոյն եկեղեցւոյն համակրութիւնն ու հոգածութիւնը կը հրաւիրէր անոր վրայ։ Ն. Գերաշնորհութիւնը կրսէր նաև իւր գրոյն մէջ թէ ամենչ ինչ աստիճան որ նորա (Մկրտիչ արքեպիսկոպոսին) Անգլիերէն լեզուոյ մասին ունեցած հմտութիւնը ներէ, կը փափագիմք որ նա մեր Քէնթբրիի վիճակին մէջ գտնուող որ և է եկեղեցւոյ կամ մատրան մէջ պաշտօն կատարէ՝ այն եկեղեցւոյն կամ մատրան գլխաւորին հրաւիրանք և տեղւոյն եպիսկոպոսին հաւանութեամբ։»

Սոյն օրինակ դրութիւններ յաճախ կը տեսնեմք Ամերիկացի Միսիոնարաց Միշընէրի Հերբլը կոչուած ամսաթերթին մէջ, և օրինակի աղագաւ, յիշեալ ամսաթերթին վերջին թուոյն մէջ ալ Այնթապ նստող Միսիոնարի մը նամակը տեսած էինք, որ Բողոքականութեան ներմուծուելէն առաջ յիշեալ քաղաքի Հայոց մէջ տիրող նախապաշարումներն և խաւարն, իսկ ընդհակառակն այժմ տեսնուած արթուն և յառաջդիմական ոգին կը նկարագրէր, ինչպէս նաև Կարինէն գրուած նամակ մը, որ Ամերիկացի Միսիոնարի մը Բաէնի դաշտին մէջ Հայ գեղացիներէ գտած համակիր ընդունելութիւնը կը պատմէր։ Մեք կրօնական թերթի մը սոյն հրատարակութեանց մեծ կարևորութիւն չէինք տար. բայց Թայմզի պէս լրագիր մ՝իր ամենէն աւելի աչքի զարնող էջերէն միոյն մէջ վերոյիշեալ յօդուածն հրատարակած և գործն ալ կարևորութիւն ստացած լինելով արժան դատեցինք մեք ալ նկատողութեան առնուլ։

(Մասիս)

ԹԻՒՐՔԻԱ

—

Լրագիրների մէջ հետևեալ տեղեկութիւններն ենք կարդում Թիւրքիայի մասին։

Նորերումս Պլեվլէի մօտ մի քանի թիւրք զինուորներ, միանալով Նօվօ-Բազարի բնակիչ մահմետականների հետ, կռուեցին աւստրիական զորքերի հետ։ Այդ կռիւը երևի քաղաքական հետևանքներ կունենայ։ Աւստրիական դեսպան կոմս Դուբսկի յայտնեց Բ. Դրանը, որ այդ կռուին մասնակցող թիւրք զինուորները աւստրիական զինուորական դատաստանին կենթակվեն։ Դրանից երևում է, որ աւստրիական կառավարութիւնը վճռել է պետական իրաւունքներ գործ դնել Նօվօ-Բազարի շրջանում, թիւրքաց հպատակներին և մինչև անգամ զինուորներին իր դատաստանին ենթարկելով։ Աւստրիական կառավարութիւնը կարծում է, որ նա Նօվօ-Բազարի սանջակում կարող է նոյն իրաւունքներն ունենալ, ինչ որ ունի Բոսնիայի և Հերցեգովինայի վերաբերութեամբ։

Թիւրքաց կառավարութիւնը, ինչպէս երևում է, բողոքել է Աւստրիայի այդպիսի ցանկութեան դէմ, բայց ամեն բան միայն խօսքերով է վերջացել։

Բ. Դուռը յանձնեց իր պաշտօնեաներից մէկին քննութիւն անել այդ գործի մասին և թիւրքաց կառավարութեան պաշտօնեան բոլոր մեղաւորութիւնը գցել էր աւստրիացիների վրա։ Այդ քննութեան վրա աւստրիացիք ոչինչ ուշադրութիւն չը դարձրելով, գործը իրանց դատարանին յանձնեցին։ Դատաստանին ներկայ կը գտնվի և Բ. Դրան հաւատարմատարը, որի ներկայութիւնն անգամ կապացուցանի, թէ Նօվօ-Բազարի սանջակում աւստրիացիները կատարելապէս իշխում են։

Մակեդոնիայում տիրող անապահովու-

*) Այս կրօնափոխ եպիսկոպոսին անցեալ վարուց և գործոց նկարագիրն յաջորդի մը կը պահենք՝ անհերքելի իրողութեամբք ցոյց տալու համար թէ իւր գայթակղական գործոց հետևանքք միայն Բողոքականութեան դիմած է։

Ծան. Մասիսի